

Համալսարանին տնը. — Նոյե մերոյէ Բրեւելի
Թիֆլիսի թղթակիրքը հետեւեալը կ'հե-
ռագրէ իր թերթին. — «Հայկական տա-
ռերու գիւտին 1500րդ տարեդարձի
հանդէսները վերջ դասն: Եւրոպական
երկրներու, Թուրքիոյ, Պարսկաստանի,
Սֆիւտոսի և Ամերիկայի Հայերէն էջմիա-
ծին ղրկուած 250 պատուիրակներ միա-
ձայնութեամբ Ս. Կաթողիկոսէն խնդրե-
ցին որ Հայ ժողովուրդին անսահման
անձնութեան հաւասարքը յայտնէ
Ջարին»:

Այս հեռագիրէն կ'հասկցուի արդէն
թէ որքան մեծ շքեղութեամբ տօնուած
է Համադգային տօնը Մայր Աթոռին մէջ,
ուր ներկայ գանուած են զանազան մար-
միններու կողմէ կարգուած պատուիրա-
կութիւններ: Հայ պատուիրակութեան,
Միացեալ Ընկերութեան, Ազգ. Վարչու-
թեան, Բարեդարձականի, և Տփլիսի Հայ
վաճառականութեան պատուիրակութիւն-
ներէն զատ, բոլոր Ռուսիոյ հայաբնակ
գաւառներու և արասահմանի Հայոց
կողմէ պատուիրակներ ղրկուած են:

Այսպէս, Լոնտոնի Հայ գաղութին և
Հայոց Միացեալ Ընկերութիւնը պատգա-
մաւոր նշանակած է Պ. Արամ Բաֆֆին,
Ներսէսեան դպրոցի հոգաբարձութիւնը՝
իր անդամներէն Յովս. Ամիրխանեանը,
Մոսկուայի Հայ ժողովուրդը՝ Լազար-
եան ճեմարանի ուսուցիչ Կարապետ Կու-
սիկեանը՝ Դաւրէժի Հայոց կողմէ՝ վաճա-
ռականապետ Ջաքարիա Նազարէզեանը,
Նոր Նախիջևեանի Աղքատաց հոգաբար-
ձութեան կողմէ՝ անդամ Գէորգ քհնյ.
Քելլէ Շահինեան և ուսուցիչ՝ Սերովբէ
Ջաթալպաշեան, իսկ թեմական դպրոցին
կողմէ էջմիածին պիտի երթայ «Լոյս»ի
խմբագիր Բ. Գ. Ռէիզեան:

Իսկ դպրոցական հիմնական դրամա-
զուտի ի նպատակ հանգանակութիւնը կը
շարունակուի մեծ եռանդով: Պատուի
Հայոց մէջ կ'յուսացուի որ պիտի հաւաք-
ուի 100,000 բուպլի, Բեդերսպուրկի Հա-
յերը 10,000 բուպլի արդէն հաւաքած են
և Ալիսցիա՝ առայժմ հանգանակուած է
500 բուպլի: